

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 2
Հեռ. +37410544041202, Ֆաքս. +37410565601, Էլ. փոստ. press@mfa.am

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

340-09-08-2008

Վրաստանում ՀՀ դեսպանության եւ Բաթումիում գլխավոր
հյուպատոսության կողմից շարունակական աշխատանքներ են տարվում ՀՀ
քաղաքացիների՝ Վրաստանից հայրենիք վերադառնալու համար:

Ս.թ. օգոստոսի 10-ի ժամը 09:00-ի դրությամբ, կազմակերպվել է ՀՀ մոտ 3500
քաղաքացիների վերադարձը:

Հայաստանի աջակցությամբ Երևան են տեղափոխվել նաեւ մոտ 850
օտարերկրյա քաղաքացիներ, այդ թվում Վրաստանում հավատարմագրված
դիվանագետներ եւ նրանց ընտանիքների անդամներ:

Այսօր վաղ առավոտյան Աջարիա են մեկնել 45 միկրոավտոբուս
Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւս մեկ շարասյուն հայրենիք
վերադարձնելու:

Հանձնարարական է տրված սահմանային ծառայություններին
առավելագույն օժանդակություն ցուցաբերելու եւ գործողությունները դյուրացնելու
համար:

Հայաստանի ԱԳՆ-ում գործող թեժ գծերին զանգահարել են հարյուրավոր
քաղաքացիներ, որոնց տեղեկություններ են հաղորդվել իրադարձությունների
զարգացման եւ Հայաստանի քաղաքացիների տեղաշարժի մասին:

Ս.թ. օգոստոսի 10-ի ժամը 12:00-ի դրությամբ, Վրաստանում տեղի ունեցող
իրադարձությունների ընթացքում Հայաստանի քաղաքացիներ չեն տուժել: -0-